

ԻՆՖՈՐՄԱՅԻԱ ИНФОРМАЦИЯ

ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՎԱԾ ՀԱՅԱԴԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Я. Р. ДАШКЕВИЧ, Э. ТРЫЯРСКИ, Армяно-кыпчакский документ из Константинополя 1618 г., Polska akademia nauk, oddział w Krakowie, Komisja orientalistyczna, „Folia orientalia“, t. XI, Krakow, 1969, s. 123—137.

ՅԱ. Ռ. ԴԱՇԿԵՎԻՉ, Է. ՏՐԻՅԱՐՍԿԻ, 1618 թ. հայ-ղփշաղական փաստաթուղթ Կոստանդնուպոլսից, *Լեհաստանի գիտությունների ակադեմիա, Կրակովի բաժանմունք, Արևելագիտական հանձնաժողով*, «Ֆոլիա օրիենտալիա», հատ. XI, Կրակով, 1969, էջ 123—137:

Ուկրաինացի հայագետ Յարոսլավ Դաշկևիչի և լեհ ղփշաղագետ էդվարդ Տրիյարսկու հոգովածը նվիրված է հայատառ-ղփշաղերեն մի հետաքրքրական փաստաթղթի, որը գրվել է 1618 թ. հունիսի 26-ին Կոստանդնուպոլսում և այժմ պահվում է Ուկրաինական ՍՍՀ պետական պատմական կենտրոնական գիվանատանը: Այդ վավերագիրը (վաճառքի համար Կ. Պոլիս բերված ապրանքի մասին վկայաթուղթը), որի հեղինակները Կ. Պոլիս ժամանած լվովահայ հինգ

վաճառականներ են, մինչև այժմ հայտնի միակ հայատառ-ղփշաղերեն փաստաթուղթն է՝ կազմված Ռեշ-Պոսպոլիտայի սահմաններից դուրս շեղինականները հրապարակել են փաստաթղթի բնագիրը (լատիներեն տառերով), լեհերեն թարգմանությունը՝ կատարված բնագրի կազմման ժամանակ և իրենց ռուսերեն թարգմանությունը: Լույս են ընծայված նաև փաստաթղթի լուսանկարը, ղփշաղերեն բառերի բառարան (119 բառ), ինչպես և անձնանունների ու տեղանունների ցանկեր:

Я. ДАШКЕВИЧ, Кам'янець-Подільський у вірменських джерелах XIV—XV ст., „Архіви України“, Науково-інформаційний бюлетень архівного управління при Раді Міністрів УРСР, № 5, Київ, 1970, стр. 57—66.

ՅԱ. ԴԱՇԿԵՎԻՉ, Կամենեց-Պոդոլսկը XIV—XV դդ. հայկական սկզբնաղբյուրներում, «Արխիվի Ուկրաինի», Ուկր. ՍՍՀ Մինիստրների սովետին կից արխիվային վարչության տեղեկագիր, Կիև, 1970, № 5, էջ 57—66:

Բարձր գնահատելով Կամենեց-Պոդոլսկ քաղաքի պատմության վերաբերյալ պահպանված հայկական սկզբնաղբյուրները և կամենալով նրանց վրա հրավիրել ուկրաինական գիտնականների ուշադրությունը, հեղինակը ուկրաիներեն թարգմանությամբ հրապարակել է հատվածներ XIV դ. հայ կաթողիկոս Թեոֆորոսի

կոնդակից, Խուտուրեյի որդի Սինանի 1394 և 1398 թթ. գրած հիշատակարաններից. ինչպես նաև Կամենիցյան տարեգրությունից (1410—1498 թթ.): Ընդհանուր առմամբ հաջողված թարգմանություններն ունեն համառոտ առաջաբան և տողատակի ծանոթագրություններ:

ЯРОСЛАВ Р. ДАШКЕВИЧ — ЭДВАРД ТРЫЯРСКИИ, Договор Н. Тороповича с львовскими и каменецкими армянами 1627 г. как памятник армяно-кыпчакского языка, „Rocznik Orientalistyczny“, t. XXXIII, z. 1, Warszawa, 1970, s. 77—92.

ՅԱՐՈՍԼԱՎ Ռ. ԴԱՇԿԵՎԻՉ — ԷԴՎԱՐԴ ՏՐԻԱՐՍԿԻԻ, Ն. Թորոսովիչի 1627 թ. պայմանագիրը լվովցի և կամենիցացի հայերի հետ որպես հայ-ղիշաղերեն լեզվի հուշարձան, «Թոշնիկ օրիենտալիստիչնի», հատ. XXXIII, պր. 1, Վարշավա, 1970, էջ 77—92:

Յա. Դաշկևիչը և է. Տրիյարսկին հրապարակել են լվով և Կամենեց-Պոդոլսկ քաղաքների հայ բնակչության ներկայացուցիչների հետ լեհահայոց նիկոլ Թորոսովիչ եպիսկոպոսի կնքած պայմանագրի ղփշաղերեն բնագիրը: Այդ փաստաթուղթը կաղծվել է 1627 թ. մայիսի 6-ին և լեհերեն թարգմանության հետ միասին երեք տարի անց մուծվել լվովի քաղաքային իշխանությունների դատական մատյանը: Հեղինակները հրատարակել են նաև պայմանագրի լեհերեն բնագիրը, ինչպես նաև նրա ուսերեն թարգմանությունը: Մինչ այժմ հայտնի էր պայմանագրի լատիներեն թարգմանությունը, որի հրատարակությունն իրականացրել է Զ. Օբերտինսկին (Z. Obertynski, Die Florentiner Union der polnischen Armenier und ihr Bischofskatalog, Roma, 1934, 61—63): Հեղինակների կարծիքով հայատառ-ղիշաղերեն այդ փաստաթղթի առկայությունը լվովի քաղաքային իշխանությունների դատական մատյանում եղակի իրողություն է: Մինչ այդ և դրանից հետո Ռեչ-Պոսպոլիտայի արևելյան մարզերի սլաշտոնական ատյանների գրքերում արևելյան լեզուներով գրանցումներ չեն կատարվել: Սովորաբար գրում էին լատիներեն կամ լեհերեն: Հաղվադեսի հանդիպող ուկրաիններեն գրառումները բացառապես լատիներեն տառերով էին: Հայատառ-ղիշաղերեն վավերագրի գոյությունն այդ մատյանում պայմանավորված է

փաստաթղթի կարևորությամբ: Հստակ վավերագրի ն. Թորոսովիչը պարտավորվում էր ամուր մնալ իր հավատում, պահպանել հայկական եկեղեցու դարավոր ավանդույթները, հավատարիմ լինել էջմիածնին: Ինչպես հայտնի է, նիկոլ Թորոսովիչը դրանից շատ շանցած պայմանադանց եղավ: 1630 թ. հոկտեմբերի 24-ին նա հայտարարեց իր կաթոլիկ դառնալու մասին և քաղաքային իշխանությունների ու ճիզվիթների օգնությամբ ղավթեց լվովի հայոց մայր եկեղեցին: Քաղաքի հայ ավագանին դիմեց լեհաստանի Սիգիզմունդ III թագավորին և դատական գործ սկսեց Թորոսովիչի դեմ: Այդ ժամանակ էլ՝ 1630 թ. նոյեմբերի 23-ին, ն. Թորոսովիչի հետ կնքված պայմանագիրը գրանցվել է լվովի քաղաքային դատարանի մատյանում:

Հեղինակները համառոտ ձևով կանգ են առել պայմանագրի առաջացման պատմության վրա և մանրամասն վերլուծել այդ փաստաթուղթը որպես ղփշաղերեն լեզվի ուշագրավ սկզբնաղբյուր: Ուկրաինացի և լեհ գիտնականների համագործակցությամբ իրականացված այս շահեկան հրատարակությունը ունի արժեքավոր բառարան, որտեղ բերված են պայմանագրի մեջ օգտագործված հարյուրից ավելի ղփշաղերեն բառերի ուսերեն թարգմանությունները: Այդ փոքրիկ բառարանում չեն ընդգրկվել միայն այլ հրապարակումներից հայտնի բառերը: Վերջում տպագրված է պայմանագրի լուսանկարը:

STANISŁAW JEDYNAK, Dawid Niezwycięzony i ormiańska szkoła hellenofiliska, „Meander“, XXVI, z. 10, Warszawa, 1971, s. 419—426.

ՍՏԱՆԻՍԼԱՎ ԵԴԻՆԱԿ, Դավիթ Անհաղթը և հունարեն հայ դպրոցը, «Մեանդեր», հատ. XXVI, պր. 10, Վարշավա, 1971, էջ 419—426:

Փիլիսոփայության դոկտոր Ստանիսլավ Եդինական այս հոդվածով լեհ ընթերցողների ուշադրությունն է հրավիրում հայ հունարեն դպրոցի լավագույն ներկայացուցիչների, մասնավորապես V—VI դդ. հայ նշանավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթի ստեղծագործությունների վրա: Սկզբում նա գրում է հայ գրերի գյուտի և հայ գրականության կաղմավորման մասին: Նա նշում

է, որ V դ. վերջերից սկսած ծաղկում է ապրել հայ փիլիսոփայությունը, որի վրա ղգալի է եղել հելենիստական իմաստասիրության աղբյուրությունը: Նրա կարծիքով հայ փիլիսոփաները, հատկապես Դավիթ Անհաղթն ու Անանիա Շիրակացին, նոր արժեքներ են մուծել անտիկ մշակույթի մեջ: Այնուհետև Ս. Եդինակը կանգ

է առնում Արիստոտելի «Կատեգորիաների» հայ Անանուն մեկնիչի, Անանիա Շիրակացու, Եզնիկի, Հովհաննես Մայրավանեցու ստեղծագործությունների վրա, բնութագրում նրանց իբրև

հունարան դպրոցի կարկառուն ներկայացուցիչների: Հողվածի մյուս մասն ամբողջովին նվիրված է Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հայացքների վերլուծմանը:

DAVID NIEZWYCIĘŻONY (АННАНТН), Definicje filozofii (fragmenty), „Meander“, XXVI, z. 10, Warszawa, 1971, s. 427—433.

ԴԱՎԻԹ ԱՆՀԱԼԹ, Սահմանի իմաստասիրության (հատվածներ), քաղմանություն էվգենիուշ Սլուշկևիչի, «Մեանդեր», հատ. XXVI, պր. 10, Վարշավա, 1971, էջ 427—433:

«Մեանդեր» հանդեսի նույն համարում տպագրված են նաև հատվածներ Դավիթ Անհաղթի «Սահմանի իմաստասիրության» գրքից: Թարգմանությունը բնագրից կատարել է հայտնի արևելագետ և հայագետ, Վարշավայի համալսարանի պրոֆեսոր էվգենիուշ Սլուշկևիչը, որն իր տրամադրության տակ ունեցել է Դավիթ Անհաղթի «Սահմանի» 1960 թ. Ս. Արևշատյանի իրականացրած հրատարակությունը (համահա-

վաք քննական բնագիրը և ուսերեն թարգմանությունը): Թարգմանված են հատվածներ «Սահմանի իմաստասիրության» երրորդ, չորրորդ, հինգերորդ և քսաներորդ պրակներից: Թարգմանիչը յուրաքանչյուր հատվածի տվել է պայմանական վերնագրեր (ի՞նչ է սահմանումը, Սահմանման ծագումը, Փիլիսոփայության ծագումը, Գործնական փիլիսոփայություն):

Я. Р. ДАШКЕВИЧ, Розселення вірменів на Україні в XI—XVIII ст., Академія Наук Української РСР, інститут історії, «Український історико-географічний збірник», випуск перший, Київ, 1971, стр. 150—181.

ՅԱ. Ռ. ԴԱՇԿԵՎԻՉ, Հայերի բնակեցումն Ուկրաինայում XI—XVIII դդ., Ուկր. ՍՍՀ գիտությունների ակադեմիա, պատմության ինստիտուտ., «Ուկրաինական իստորիկո-գեոգրաֆիկ զբիրնիկ», հատ. I, Կիև, 1971, էջ 150—181:

Հեղինակն իր առջև խնդիր է դրել ստեղծել Աջափնյա և Արևմտյան Ուկրաինայի քաղաքներում ու բնակավայրերում, ինչպես նաև հարևան երկրներում XI—XVIII դարերի ընթացքում գոյություն ունեցած հայկական գաղթօջախների ցուցակ-բառարան, որը հաղորդելու է համառոտ տվյալներ դրանց առաջացման և գոյատևման ժամանակի, բնակչության քանակի մասին: Մինչև այժմ այդպիսի ուսումնասիրության հաջող փորձեր են կատարել լեհահայ գիտնականներ Սադոկ Բարոնչը և Ստանիսլավ Դոնիզևիչը: Հենվելով նախորդ ուսումնասիրողների հետազոտությունների, ինչպես նաև հրապարակված ու անտիպ բազմաթիվ նյութերի վրա, Յա. Դաշկևիչը կարողացել է ստեղծել Ուկրաինայի (առանց Ղրիմի), լեհաստանի ու հարևան երկրների հայ-

կական գաղթավայրերի ցուցակ, որը բաղկացած է 56 բառ-միավորից: Բաց դա սոսկ բառարան չէ. տողատակի ավելի քան 260 ծանոթագրություններում հիշատակված են Ուկրաինայի ու լեհաստանի հայ գաղութներին վերաբերող հարյուրավոր սկզբնաղբյուրներ և հետազոտություններ, որոնց առկայությունը ցուցակին տալիս է նաև շատ հաջողված ու հարուստ մատենագիտության տեսք: Բառարանի արժեքը բարձրացնում է նաև աշխատության մեջ հրապարակված քարտեզը, որտեղ նշված են խնդրո առարկա բոլոր գաղթօջախները: Ցուցակի սկզբում զետեղված ընդարձակ առաջաբանում խոսվում է Ուկրաինայում հայ գաղթականների հաստատվելու, հայ գաղութների առաջացման մասին:

JAN REYCHMAN, Badania nad językiem ormiańsko-kipczackim i dziejami ormian polskich, Polskie towarzystwo orientalistyczne, „Przegląd orientalistyczny”, № 1 (77), Warszawa, 1971, s. 61—71.

ՅԱՆ ՌԱՅԽՄԱՆ, Հետազոտություններ հայ-լվիչադերեն լեզվի և լեհահայոց պատմության վերաբերյալ, լեհական արևելագիտական ընկերություն, «Փշեգլոնդ օրիենտալիստիչնի», № 1 (77), Վարշավա, 1971, էջ 61—71:

Լեհ արևելագետ պրոֆ. Յան Ռայխմանը ամփոփում է հայատառ-ղվիչադագիտության բնագավառում, ինչպես նաև լեհահայոց պատմության ուսումնասիրման ասպարեզում հատկապես վերջին ժամանակներս կատարված հետազոտությունների արդյունքները: Ընդգծելով թուրքական լեզվախմբին պատկանող ղվիչադերեն (կումաներեն կամ պոլովեցերեն) մեռած լեզվի ուսումնասիրման կարևորությունը, հեղինակը բացառիկ արժեք է տալիս լեհաստանում ապրած ղվիչադախոս հայերի հայատառ ղվիչադերեն գրած բազմաթիվ սկզբնաղբյուրներին, որոնք պահվում են աշխարհի մի շարք երկրների խոշոր գրադարաններում: Մեկ առ մեկ նա կանգ է առնում այն բոլոր հեղինակների գործերի վրա, որոնք հրապարակել կամ ուսումնասիրել են հայատառ-ղվիչադերեն սկզբնաղբյուրները: Այդ ուսումնասիրողների երկար ցանկը գլխավորում են հայ գիտնականներ Ստ. Գյուվեր Ագոնցը և Մինաս Բժշկյանը, որոնք հաջորդաբար 1802 և 1830 թթ. մասնագետների ուղադրությունն են հրավիրել այդ մեծարժեք նյութերի վրա: Այնուհետև նա խոսում է Ղ. Ալիշանի, Ք. Քյուլուկ-

Հովհաննիսյանի հրապարակումների նշանակության և այն մասին, թե ինչպես սկիզբ դրվեց հայատառ-ղվիչադերեն գիտական հրատարակումներին ու մասնագիտական ուսումնասիրությունը: Յան Ռայխմանը թվարկում է ավստրիացի գիտնական, պրոֆ. Ֆ. Կրեյց-Գրայֆենհորստի, անգլիացի Ֆ. Կոնիբերի, ֆրանսիացի Ժ. Դընիի, ուկրաինացիներ Ա. Կրիմսկու և Տ. Դրոնինի հրապարակումները, արժեքավորում դրանք որպես կարևոր ավանդ հայատառ-ղվիչադագիտության ուսումնասիրման գործում: Նա բարձր գնահատական է տալիս հունգարացի պրոֆ. է. Շյուցի աշխատանքներին, ինչպես նաև «Կամենիցյան տարեգրքի» հրատարակությանը, որն իրականացրել են պրոֆ. Ժ. Դընին և նրա աշակերտ, լեհ արևելագետ դոկտ. էդ. Տրիյարսկին:

Հոգվածի երկրորդ մասում խոսվում է լեհահայոց պատմության վերաբերյալ հատկապես վերջին տարիներս ինչպես լեհաստանում և Ուկրաինայում, այնպես էլ Հայաստանում լույս ընծայված աշխատությունների մասին:

M. ZAKRZEWSKA-DUBASOWA, Ukrainsko-armianskie swiazi w XVII wiekie. Sbornik dokumentow. Kijew, 1969, izd. „Naukowa Dumka”, ss. 164, Archiwnoje uprawnienie pri Sowietie Ministrow Ukrainskoj SSR, Lwowskij Obłastnoj Gosudarstvennyj Archiw, „Kwartalnik Historyczny”, Warszawa, 1971, № 2, str. 420—422.

Մ. ԶԱԿՐԵՎՍԿԱ-ԴՈՒԲԱՍՈՎԱ, Ուկրաինա-հայկական կապերը XVII դարում: Փաստաթղթերի ժողովածու, Կիև, 1969, «Նաուկովա դումկա» հրատարակություն, 164 էջ, Ուկրաինական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր արխիվային վարչություն, Լվովի մարզային պետական արխիվ, «Կվարտալնիկ Հիստորիչնի», Վարշավա, 1971, № 2, էջ 420—422:

Լեհ գիտնական, դոկտոր Միրոսլավա Զակժեվսկա-Դուբասովան, որը հայտնի է Լեհաստանի Զամոստյե քաղաքի հայկական գաղութի պատմության վերաբերյալ իր ուսումնասիրություններով, ներկա գրախոսությամբ վեր է հանում XVII դարի հայ-ուկրաինական կապերի մասին Յա. Դաշկևիչի հրատարակած փաստաթղթերի ժողովածուի արժանիքները և անում մի քանի

ուղադրավ գիտություններ: Գրախոսողը գրտնում է, որ ժողովածուում հրատարակված վավերագրերը հետաքրքրական և արժեքավոր նյութեր կարող են տալ լեհահայերի կաթիլկացման պատմությունն ուսումնասիրող մասնագետներին: Նա նշում է հեղինակի քրտնաջան աշխատանքը նյութերի որոնման և ուսերեն թարգմանության գործում: Մ. Զակժեվսկա-Դուբասովան չի հա-

մածայնվում Դաշկերի հետ, որը լեհահայոց սլաքաբոր կաթուղի եկեղեցուն միանալու դեմ համարում է ազգային-ազատագրական պայքար ուղղված ընդդեմ լեհական իշխանությունների: Նա քննադատում է ժողովածուի կազմողին, որը նույնացրել է տեղական բնակչության (այսինքն ուկրաինացիների) և լեհական իշխա-

նությունների կողմից զանազան արտոնություններ ստացած եկվոր հայերի վերաբերմունքը պետական իշխանությունների, ինչպես նաև XVII դարում ծավալված ազատագրական շարժման նկատմամբ:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ

(Մատենագիտություն, 1970)

Չորրորդ անգամ հայագետներին եմ ներկայացնում Սովետական Միությունից դուրս հրատարակվող ոչ հայկական հանդեսներում լույս տեսած հայագիտական հոդվածների ցուցակը: Նախորդ մատենագիտական ցանկերի պես այստեղ ես չեմ ընդգրկված հայկական հնագիտությանը կամ ուրարտագիտությանը վերաբերող հոդվածները, ինչպես նաև արտասահմանում հրատարակվող հայերեն հանդեսների նյութերը:

Խորին շնորհակալություն եմ հայտնում այն մասնագետներին, որոնք հետաքրքրություն են ցուցաբերել այս մատենագիտության նկատմամբ:

Դժվար է պնդել, թե կատարված աշխատանքը ամբողջական է, բայց հույս ունեմ, որ այն կարող է օգտակար լինել բոլոր նրանց, ում դյուրամատչելի չեն արևմտյան շատ պարբերականներ:

M. Ashjian, The Acceptance of the Ecumenical Councils by the Armenian Church, with special reference to the Council of Chalcedon, *The Ecumenical Review* (Geneva), vol. 22 (1970), p. 348—362.

R. Ataian, Die Armenische professionelle Liederkunst des Mittelalters, *Revue des Etudes Arméniennes* (Paris), N. S. vol. 7 (1970), p. 241—266.

G. Baer, Monopolies and restrictive practices of Turkish guilds, *Journal of the Economic and Social History of the Orient* (Leiden), vol. 13 (1970), p. 145—165.

[Հանախակի վկայակոչումներ օսմանյան շրջանի հայկական վաճառականական տներին]:

H. W. Bailey, A Range of Iranica, W. B. Henning Memorial Volume, ed. Mary Boyce and Ilya Gershevitch, London, 1970, p. 20—36.

Մասնավորապես

1. Apizar

2. bālvurd (cf. Armenian varavurd)

7. tel (Armenian t'el)

P. Z. Bedoukian, A coin of Tigranes the Great of Armenia, struck in Commagene, *The Numismatic Chronicle* (London), 7th Series vol. 10 (1970), p. 19—22.

P. Z. Bedoukian, Three Notes on Armenian Coins, *Museum Notes* (American Numismatic Society, New York), vol. 16 (1970), p. 87—94.

1. The reverse legend on copper coins of Toros I

2. A unique double dram of Levon I

3. A unique copper dang of Levon II

A. Beylerian, Deux lettres du catholicos arménien à Napoléon et à Portalis, *Revue de L'Institut Napoléon* (Paris), vol. 115 (1970), p. 49—56.

G. Bolognesi, Postille sulla traduzione armena delle „Quaestiones et solutiones in Genesim“ di Filone, *Archivio Glottologico Italiano* (Firenze), vol. 55 (1970), p. 52—57.

[Փիլոնի հոմերոսյան ձեռքբերման հայկական մեկնության մասին. Ոգիսական 17, 485—487]

G. Bolognesi, Traduzioni armene di testi greci, *Studia Classica et Orientalia Antonino Pagliaro Oblata* (Rome), vol. 1 (1969), p. 219—291.

[«Թուլունեայ Յադագո ճարտասանական կրթութեանց» մասին. աշխատությունք 2. Մանանդյանի, Երևան, 1938]:

D. Burnouf, L'Art arménien, *Jardin des Arts* (Paris), № 191 (Oct. 1970), p. 44—57.

[1970 թ. հոկտեմբերին Փարիզի դեկորատիվ արվեստների թանգարանում կազմակերպված Հայկական ցուցահանդեսի